ղակի պարտականութիւնն էր գոնէ մի քանի բառ արտասանել, քանի որ նկատեցին, թէ գործը ինչպիսի կերպարանք է ստանում։ Բայց նրանք լռում էին և ներկայ եղողները նկատում էին, որ նրանք ծաղրում էին ամաչած պաշտպանողականներին։

ԻՏԱԼԻԱ

Նոյեմբերի 26-ին կայացաւ իտալական պատգամաւորների ժողովը, ուր մինիստր Մանչինի, պատասխանելով իրան առաջարկված զանազան հարցմունքներին, պատասխանեց. „Ընդունելով մինիստրութիւնը, մենք գտանք Իտալիայի արտաքին դրութիւնը խախտված, գտնվելով Մարսէլի և Տունիսի անցքերի պատճառով Ֆրանսիայի հետ թշնամական յարաբերութիւնների մէջ։ Մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ, թէպէտ և բնական էին, բայց, այնու ամենայնիւ, մէկ անբացատրելի կասկած էր տիրում մեր մէջ։ Այդ պատճառով մինիստրութիւնը իրան նպատակ դրեց նախ՝ ցրվել այն կասկածը, որ ունէին Իտալիայի իրական դիտաւորութիւնների մասին։ Երկրորդ՝ իր հարևան ազգերի հետ բարեկամական և խաղաղ յարաբերութիւններ հաստատել, մի և նոյն ժամանակ առաջ գնալ, կատարեալ համաձայնութեամբ այն պետութիւնների հայացքների հետ, որոնք աւելի հետաքրքրված են խաղաղութիւնը պահպանելու մէջ և որոնց շահերը աւելի համերաշխ են մեր սեփական շահերի հետ։ Երրորդ, ներկայացուցիչ դառնալ Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի մեծ շահերի, և նոյնպէս պաշտպան այն քաղաքականութեան, որի նպատակն է խաղաղութիւնը պահպանել. իտալացիների և գերմանացիների մէջ եղած դարևոր թշնամութեան վերջ դնել, նորից եղբայրանալով. վերջապէս, իտալական ժողովրդի միաձայն ցանկութիւնը համոզեց մեզ, որ ժամանակ է արդէն հեռացնել այն կասկածը, որով վերաբերվում էին դէպի մեզ Վիէննան և Բեռլինը և բարեկամութիւն հաստատել երեք ժողովրդների մէջ։

«Մենք Վիէննայի հետ սկսեցինք բարեկամանալ այն ժամանակից, երբ համոզվեցանք, որ Աւստրիան կատարելապէս բաժանում է մեր ցանկութիւնը։ Վիէննայի տեսակցութիւնը մեծ աջողութիւն ունէր և շատ սիրով է ամրապնդված։ Մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ շատ լաւ են և վերջին ժամանակները աւելի լաւացան»։

Դրանից յետոյ Մանչինի հաղորդեց դեսպանների հաշիւները, որոնք ապացուցանում են, որ իշխան Բիսմարկ Աւստրիայի հետ բարեկամութիւնը համազօր է համարում Գերմանիայի հետ բարեկամութեան։ Իսկ ինչ վերաբերում է վերջին ժամանակ Իտալիայի մասին Բիսմարկի յայտնած մտքին, Մանչինի ասեց. „Հարկաւորութիւն չը կայ հերքել այն համոզմունքը, իբր թէ իտալական միապետութեան և թագաւորական ցեղին վտանգներ են սպառնում։ Հասարակական ինքնաճանաչութիւնը կարող է մեզ վկայել, որ, շատ կարելի է ոչ մի երկրի մէջ միապետութիւնը և թագաւորական ցեղը չունեն այնքան խոր արմատներ, ինչպէս Իտալիայում, ուր, որպէս և Գերմանիայում, թագաւորող ցեղը նշանաւոր ծառայութիւններով կապեց իր վիճակը ժողովրդի գործի հետ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, Նոյեմբերի 20-ին

Օրվայ մի տխուր անցք Ներսէս պատրիարքի հրաժարական տալն է այս անգամ իրան Սայիդ փաշային։ Այսօր, կիրակի լինելով բնական է, որ լրագիրները չը կարողացան թնդալ այս եղելութեամբ, բայց վաղուանից օրվայ գլխաւոր անցքը այս կը համարվի։

Հրաժարականը տալուց առաջ, ասում են պատրիարքը ի միջի այլոց Սայիդ փաշային գանգատվել է այն հազար ու մէկ հալածանքների մասին, որ կրում է հայ ազգը գուցէ նորա անձնաւորութեան պատճառաւ, վասն որոյ իր ժողովրդի մեղքը իր վրա չառնելու համար, հայոց պատրիարքը տալիս է իր հրաժարականը։ Այս ասելով հանում է գրպանից պատրաստ հրաժարականը և տալիս է Սայիդին։ Սայիդ փաշան ասում է պատրիարքին «ինչու չէք սպասում, ձեր սրբազնութիւն, որ ձեր օրով վերջանայ հայոց հարցը, որով մի մեծ փառք ստացած կը լինէք...» Պատրաստաբան Ներսէսը պատասխանում է. «այո, իրաւունք ունէք, որ իմ ազգի փրկութիւնը դըժոխային հալածանքներից իմ առաջին և վերջին փառքս կը լինէր, բայց որովհետև այդ փառքին արժանանալու յոյս ես բնաւ չունեմ, վասնորոյ կը ցանկանամ, որ այդ փառքը դուք ստանաք գուցէ ձեր օրով ազատելով տէրութեան երեք միլլիոն հաւատարմագոյն հպատակներ այն տանջանքներից, որ եօթը դար է շարունակվում...» Սայիդ փաշան խնդրում է պատրիարքին որ մի քանի օր սպասէ իր հրաժարականի պատասխանին։ Պատրիարքը ասում է, որ իր համար վայել չէ տեսնում իր մի անգամ տուած որոշումը կրկին փոխել. այս խօսքով դուրս է գնում։

Հիմայ մնում է, որ պատրիարքի հրաժարականը վաւերացվի նոյնպէս և ազգային ժողովից, որի մէջ քանի որ կան Իզմիրլեան եպիսկոպոս, Սերվեմ-Գուլի, Նուսուֆեան, Բէզեան և Փափազեան, հրաժարականը վաւերացնելու համար ոչինչ խոչնդոտ չէ կարող լինել, միայն երկիւղ կայ ժողովրդի կողմից, որովհետև ժողովրդի տրամադրութեան այսպիսի մի լարված ժամանակ, Ներսէսի գործից հեռանալը ժողովրդի գլուխը կորել ասել է։ Սպասենք ու տեսնենք։

Լսածիս համեմատ լորդ Դիւֆերին և Բուրկ վաղը տեսակցութիւն են նշանակած պատրիարքին. երևի հրաժարականի պատճառով է. ի հարկէ պատրիարքը չի զլանայ հարկաւոր եղածից աւելին ասել Անգլիայի ներկայացուցիչներին, որոնք փոխանակ պահանջներ անելու Թիւրքիայից, սկսել են կրկին սաղուրագ անել նորա հետ։

Ասեցի որ պատրիարքի հրաժարականի վաւերացման ազգային ժողովի կողմից պիտի դիմադրէ հասարակ ժողովուրդը. այդպէս էլ եղաւ. երբ լսեց այդ ժողովուրդը պատրիարքի հաստատ դիտաւորութեան մասին հրաժարվել իւր պաշտօնից, երկու օրուայ մէջ տասը հազարի չափ ստորագրութիւն ժողովվեց մեծ մասամբ գաւառացի հայերի մէջ, որոնք լսել անգամ չեն ուզում որ և է ուրիշ պատրիարքացու մարդու վրա, բացի Ներսէսը։ Լսածիս համաձայն յուզմունքը այնչափ մեծ է և ընդհանուր, որ Ստեփան Փափազեան անուն դաւաճանին իմաց է տրված, որ նորա վիճակը որոշված է, եթէ ազգային ժողովի մէջ քինթը ցոյց տայ...

Ներսէս պատրիարքի հրաժականը այս քանի օրերս Թուրք և ֆրանսիական լրագրերի յօդուածների գլխաւոր նիւթն է. Phare du Bosphore և Stamboul իւրաքանչիւրը իր կողմից մի քանի օր շարունակ առաջնորդող յօդուածներ են նուիրում այդ հրաժարականին «La demission de Monseigneur patriarche Nersés» մեծատառ վերնագրով։ Այսօրվայ «Վագթ» անգամ, որ կարդացնել տուեցի մի բարեկամիս, չփոխված է Ներսէսի առած որոշման վրա այսպիսի մի փափուկ ժամանակ. ինչպէս երևում է, Թիւրքերը բաւական ճնշում են զգում օտար տէրութիւնների ներկայացուցիչներից հայոց հարցի դանդաղ ընթանալու պատճառով, որի վրա յենած և հայոց պատրիարքը հրաժարվում է իր պաշտօնից։ Ընդհանրապէս Ներսէսի հրաժարական տալը շատ պիտի ցնցէ մտքերը և զարկ տայ հայոց հարցին, վասնորոյ նա շատ արդիւնաւոր և նպատակայարմար մի որոշում կարող է համարվել, այն պայմանով միայն, որ այդ հրաժարականը վերջ ի վերջոյ չի ընդունվի, այլ միայն իր ցանկալի օգուտը արտադրէ։

Պատրիարքի վերջի տեսակցութիւնը և ունեցած խօսակցութիւնը Սայիդ փաշայի հետ այս քանի օրերս Կ. Պօլսի բոլոր շրջանների հիացման նիւթն է։ Յայտնի է, որ շատ համբերող և շատ բարի մարդու կատաղութիւնը թէպէտ հազիւ կը գայ, եկած ժամանակը խիստ բուռը կը լինի. այդպէս էլ եղել է Ներսէսի հետ։ Խօսելով խօսելով նա այնչափ սկսել է իրան մոռանալ, որ բերանը փրփրած վեր է կացել տեղից և բղաւել ասելով. «գիտէք ովքեր են Թիւրքիային հիմայ ծառայողները, ձերդ վսեմութիւն»։ Սայիդը հետաքրքրութեամբ հարցրել է.—«Թիւրքիային ծառայողները, հիմայ չափկն խաֆիէ մամուրիներն են» ասել է Ներսէսը.—«Էֆենդի, ինչ էք ասում, բացատրեցէք ձեր միտքը» պահանջել է Սայիդը.—«Այո, կրկնում եմ ասածս, Թիւրքիային ծառայողները հիմայ այն չափկն խաֆիէ մամուրիներն են, որոնցից շատերը պատրիարքարանից վռնդված վատ և անպէտք արարածներ են»։ Սորանով պատրիարքը պարզել է թէ ամեն բան խաբաբանողը տէրութեան այն վատահոգի լրտես հայ էֆենդիներն են, որոնցից շատերին վզին տալով դուրս է անել տուել պատրիարքարանից Ներսէսը։ «Չափկն խաֆիէ մամուրի» նշանակում է սըրիկայ պաշտօնեաներ ծածուկ ոստիկանութեան, всякія сволочи тайной полиціи... Ահա այս сволочь-ներն են հայ էֆենդիներից, որոնք Թիւրքերին հաճոյանալու համար օրը հարիւր տեսակ բաներ բամբասելով Ներսէսի մերթ անգլիասիրութեան, մերթ ռուսասիրութեան, մերթ յեղափոխականութեան վրա, գրգռում են Թիւրք կառավարութիւնը հայոց պատրիարքի դէմ և կաշկանդում են հայոց հարցի լուծումը։

Չը նայելով պատրիարքի այսպիսի արտասովոր տաժանութեան, սակայն մեծ վեզիրը շատ քաղաքավարութեամբ և համեստութեամբ է վարել իրան իր վշտացած հիւրի հետ, այնպէս որ ինքը իր ձեռքով ծխախոտ է ոլորել պատրիարքի համար և իր ձեռքով սենեակի միւս անկիւնից սեղան քաշել նորա առաջը սուրճը դնելու համար։

Անտարակոյս Սայիդ փաշայ կը գնահատէր պատրիարքի անկեղծ խօսքերի արժէքը ի նպաստ նոյն իսկ Թիւրքիայի բարօրութեան, որովհետև ինչպէս ասում են Ներսէսը շատ համոզիչ կերպով է բացատրել այս անգամ այն չարաբաղդ հետևանքները, որոնք պիտի յառաջ գան Թիւրքիայի անտարբերութիւնից դէպի Հայաստանի բարւոքումը։ Ահա այս դրութեան մէջ են գործերը, տեսնենք թէ ինչ կասէ վաղվան օրը, երբ ոչինչ որոշում չը նախատեսնելով, մեր այստեղի կացութիւնը միայն «տեսնենքի» է մնացած։

Խորէն սրբազանը երէկ պատուելով ինձ իր այցելութեամբ ի միջի այլոց հաղորդեց, որ փարիզի արիստոկրատ լրագիրներից մինի խմբագրութիւնը. որ Saison լրագրի խմբագրութիւնն է, առաջարկում է նոյնպէս իր յօժարականութիւնը միջամտել հայոց խնդրի մէջ, եթէ միայն արևելքի մէջ բաժանորդագրութեան միջոցով որ և է ազդեցութիւն ստանալու յոյս ունենայ։ Ես խոստացայ այս մասին գրել Մշակին, որ ահա կատարում եմ, իսկ ինչ կը վերաբերվի այդ լրագրին, կամ մի այլ լրագրին, ինչպէս փարիզի «Union Republicaine» է, կամ Լօնդօնի «Gazette Orientale» նոցա օգնութիւն մատուցանելու մասին, էլ ապահով ենք, որ «Մեղու Հայաստանին» եթէ ոչ ազգային համերաշխութեան կամ աշխատանքի բաժանման տեսակէտով, գոնէ լոկ յանուն հայութեան կաշխատէ դոցանից մէկին նոյնը անել, ինչ արեց Մշակը «Journal d'Orient»-ի համար։ Երբ խօսեցինք իր ժամանակին այս վերջի լրագրին օգնելու վրա, Մեղուն հազար ու մէկ պատրւակների տակ, ինչպէս օրինակ՝ «Journal d'Orient»-ը փարիզ չէ հրատարակվում, բացի հայերին ուրիշ փոքրիկ ազգերին էլ է պաշտպանում, կամ խմբագրի բերանը ծուռ է և այլն այսպիսի բաներ ասելով, իրան անկարող յայտնեց նորան օգնելու մէջ։ Լաւ, դիցուք թէ բոլոր իր ասածները «Journal d'Orient»-ի համար հէնց իրաւացի էին, բայց հիմայ ինչ ունէ ասելու «Saison»-ի, «Union»-ի, «Gazette Orientale»-ի մասին. թող մէկին էլ ինքը օգնէ, եթէ միայն որ և է ազդեցութեան նշոյլ վայելում է հայ հասարակութեան մէջ, այսպիսի մի մեծ ազգային ճգնաժամին։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Гласность» լրագրում կարդում ենք հետևեալը. «Խօսելով ռուս-թիւրքաց բանակցութիւնների մասին Կ. Պօլսում, անգլիական «Times» լրագիրը ապացուցանում է, որ ռուս դէլէգատների առաջարկութիւնը, որ հակառակում է Բեռլինի կօնգրէսի վճռին, չը պահանջել ի հաշիւ պատերազմական վարձատրութեան ոչ հողային աւելացում, ոչ էլ առաջնութիւն պարտքերի վճարման մէջ Բ. Դրան ուրիշ ֆինանսական պարտաւորութիւնների շարքում, պահանջում է Եւրոպայի միջամտութիւնը և չէ կարող վճռված լինել մասնաւոր բանակցութիւնների միջոցով Կ. Պօլսի մէջ»։

—Բեռլինի լրագիրները հաղորդում են որ Ռուսաստանի և Գերմանիայի մէջ սկսված են բանակցութիւնները մաքսային տուրքերի պակասեցնելու մասին այն ապրանքների վրա, որոնք բերվում են Ռուսաստան։ Ոմանք կարծում են որ հարցը վերաբերվում է միմիայն ոսկի դրամով մաքսային տուրքը վեր առնելու կանոնը վերցնելու մասին։

—«Kölnische Zeitg» լրագրին հեռագրում են հետևեալը. «Ռուսաստանը համաձայնվել է կիսով չափ պակասեցնել պատերազմական կօնտրիբուցիայի գումարը, որ ստանալու ունի Թիւրքիայից, տարեկան մէկ ու կէս պրօցէնտ վճարով կապիտալից»։ Յայտնի է որ մինչև այժմ Ռուսաստանը պահանջում էր Թիւրքիայից 300 միլիօն ռուբլ պատերազմական կօնտրիբուցիա, իսկ այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, այդ գումարի կէսը կը լինի, ուրեմն 150 միլիօն ռուբլ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 դեկտեմբերի։ Իշխան Ուրուսով հիւանդութեան պատճառով արձակվում է Նորին Մեծութեան Սեփական երկրորդ բաժնի գլխաւոր կառավարչի պաշտօնից։ Ֆինանսների մինիստրութիւնը հաղորդում է, որ քաղաքային հասարակական բանկերի ենթադրած փոփոխութիւնը չէ վերաբերում գործող կանոնադրութեանը։ փոփոխութեան նպատակն է փոխառութիւնը որքան կարելի է ապահով և մատչելի դարձնել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 դեկտեմբերի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. փարիզի մէջ կազմակերպված Ֆրանսիական ընկերութեանը թոյլ է տուած նաւթի արդիւնաբերել Ղրիմի մէջ։ Առաջարկված է մօտաւոր երկու տարիների ընթացքում կառուցանել հետևեալ երկաթուղիները. Եկատերինօբուրսկօ-Տիւմենսկայա, արևելեան Դօնեցկայա, Էլտօնսկայա և Պերեկօպսկայա, Րժեվօ-Բեժիմսկայա, Վինդավօ-Տուկումսկայա։ Երկաթուղիները երևի գանձարանը կը կառուցանի։ Եթէ բաժանորդական ընկերութեանը յանձնվի, դա կը լինի նոր պայմաններով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 դեկտեմբերի։ Պետական բանկի 5°/o տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 91 ր., հինգերորդ 90 ր. 75 կ., ներքին 5°/o առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր., երկրորդ 217 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 12 կ., երկրորդ 90 ր. 25 կ., երրորդ 90 ր. 25 կ., ոսկի 7 ր. 80 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,37 պէնս, Ամստերդամի վրա 128,37 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 216 մարկ 75 պֆ., փարիզի վրա 267 ֆրանկ 62 սանտիմ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ